Հարգելի գործընկերներ

«Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» հոդվածների ժողովածուի հրատարակությամբ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտն ազդարարում է մի նոր մատենաշարի հիմնադրման մասին: Ինստիտուտի գիտական խորհրդի հավանությանն արժանացած այս ձեռնարկման հիմնական նպատակն անշուշտ միջազգային ստանդարտներին համապատասխանող գիտական պարբերականի ստեղծումն է, որտեղ կարտացոլվեն սոցիալական (մշակութային) մարդաբանության ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Նախատեսում ենք լույս ընծայել տարեկան երկու հատոր: Յուրաքանչյուր հատոր ունենալու է որոշակի թեմատիկ ուղղվածություն, որտեղ հրատարակվելու են ինչպես ինստիտուտի աշխատակիցների, այնպես էլ բնագավառի այլ մասնագետների՝ հայերեն և օտար լեզուներով հոդվածներ, մենագրությունների, ատենախոսությունների գրախոսականներ, գիտաժողովների, կլոր սեղանների, սեմինարների արդյունքներն ամփոփող հաղորդումներ և ակնարկներ:

«Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ» հոդվածների ժողովածուի խմբագրությունը մատենաշարի յուրաքանչյուր հատորի հրատարակության բոլոր մասնակիցների հետ փոխհարաբերվելիս առաջնորդվելու է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքի պահանջներով, գիտական հրատարակությունների էթիկայի կոմիտեի (Com-

mittee on Publication Ethics-COPE) մշակած և հաստատած սկզբունքներով և ստանդարտներով:

Տպագրության համձնված հոդվածներն ու նյութերը պարտադիր գրախոսվելու են: Խմբագրության սահմանած գիտական և տեխնիկական չափանիշներին չհամապատասխանող, ինչպես նաև բացասական եզրակացությամբ աշխատանքները չեն տպագրվելու:

Համոզված եմ, որ մատենաշարի խմբագրական խորհրդի, հատորների խմբագիրների և հեղինակների համատեղ ջանքերով այս պարբերականը կարճ ժամանակահատվածում կդառնա հնագիտության, ազգագրության/ազգաբանության, բանագիտության, էթնոսոցիոլոգիայի և հարակից այլ բնագավառների մասնագետների համար սպասված և գնահատված հրատարակություն:

Գլխ. խմբագիր Պավել Ավետիսյան